

831.99

U-79

52

76/2/20 9/4

179

1897

✓

891.542-3

Ա-79

ՍԵՄԻՏԵՐՆԻ



Գ Ր Ե Ց

ՍՏԵՓԱՆ ԱՐԵՏԻՔԵԱՆՆԻ-ԲԱՆԱՆՈՅԻ



Տ Փ Խ Ի Ս

Տպարան Մ. Հարաձէի և Ընկ. Նիկ. 21

1897

459324000

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԱՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

W 1244 W.B.

«Հայկական հանրապետության կրթության
միության հրատարակչություն»
Պ. Գրիգորյան

8 ՍԵՄԻՏԱՐՆԻ

891.542-3
W-79
W.

Հեղինակ
179



Գ Ր Ե Ց

ՍՏԵՓԱՆ ԼԻՆԻՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԸՆՈՅՈՒ

1011
101



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Հարաձեռն, Նիկ. 21
1897

1811

Дозволено цензурою, Тифлисъ, 13-го Іюня
1897 г.



179-2014

ԿՔ 178

2004

ՍԱՄԻՏԱՐՆԻ

Ա.

189... Թուի յունիսի վերջերում Անցրան գիւղում մի առանձին իրարանցում էր նկատուում. այստեղ-այնտեղ գիւղացիները խմբուած, հետաքրքրութեամբ նայում էին մի խումբ հրիտասարկների յետևից, որոնք իրանց արտաքինով բոլորովին չէին նմանում շրջապատողներին: Երիտասարդներն անցնում էին բազից բազ, տնից տուն, իրանց առաջին ունենալով զգիր Թանէսին, որը չներ հաշացնողի ծանր պարտաւորութիւնն ունէր իր վզին: Նա շատ անբաւական էր երևում ու, բոլորովին չը քաշուելով, մըթմըթում էր ինքն իրան. «սա ի՞նչ բան ա, ձեզ մատաղ, ես մինչև հիմա գիւղում իմ յետևից պրիտաւ եմ մանածել, դադախ եմ մանածել, նրանց ոչ չուն ա մօտկացել, ոչ կատու. էս օրհնուած պարուններից մինչև անգամ հաւերն էլ չեն վախենում: Հէնց որ չները զալիս են՝ «Թանէս, Թող չանես մեղ կժեն».

էլ ոչ պրիստաւի թուրն ունեն, ոչ դազախի դամշին ¹⁾։ դէ Թանէսն ինչ հողը տայ գլխին, ճարը կտրած դազանակը քաշում է ու շների կարկաժներին ածոց անում ու կլանչոցը չէսս գցում։ Ո՞վ է իմանում, գուցէ մի ժամանակ էլ շնատէրը մի թաքուն տեղ Թանէսի կարկաժին ածոց անի։ դէն էն վախտը, աղնիւ պարուն, եկ ու էշը փխակից ²⁾ հանի»։ Երիտասարդները շատ էին գուարճանում Թանէսի խօսքերով։ Բայց մի բան, որ չէին ներում նրան, այդ նրա սովորութիւնն էր գիւղացի կանանց խիստ դարձուածքներով դուրս կանչել տներից, քանի որ երկշոտ գեղջկուհիները, հեռուից նըկատելով երիտասարդների խումբը, շտապում էին տներն ու փակում այնտեղ։ Այդ պատճառով շներին պահող չէր լինում։ Թանէսին էր մնում միայն աջ ու ձախ շարժել իր Մհէի լախտն ու ցրուել կատաղած դազաններին։ Վերջապէս սրան-նրան մի բանի հարուած հասցնելուց յետոյ, Թանէսին յաջողւում էր կարգը վերականգնեցնել։ Երիտասարդներն ուղղում էին իրանց քայլերը դէպի գոմը, մարագը, աչքի էին անցնում հաւաքուներ, հորթատուներ ու շըրջապատող աղբի կոյտերը։ Նրանցից մինը բա-

¹⁾ Մարահը։ ²⁾ Յեկից։

գում ընկած մի բարի վրայ նստած արագ արագ գրում է բոլոր տեսածը և այն, ինչ որ թելադրում էին նրան գոմն ու մարագը զըննողները։ Թանէսը, շների հետ իր հաշիւները վերջացրած, յենուած իր դազանակի վրայ, նայում է երիտասարդներին ու ասում. «Գրեցէք, ձեզ մատաղ, գրեցէք. իմ թշնամին մեծաւորի դալամի (գրչի) տակը չի ընկնի. գրելիս նայում ես, լսում ես միայն՝ ճռ—մռ, ճռ—մռ, ասում ես. ինչ ա, դալամ ա էլի, հօ Քեարամի թուրը չի, վիդ չի կտրիլ, ամա մի քանի օր անցնելուց ետը, մնել ես տեսնում եասավուլը գալիս ա, թա մրօվի սուղը քեզ կանչում ա, պօվիսկա ա ուղարկել, հնձածդ ու հնձիլուն կրակ տուր ու դնա, հրամանը թունդ ա։ Ճար չի կայ. վեր ես կենում խիզանը սոված-ծարաւ թողնում տանը, ինքդ ճանապարհ ընկնում ադի կուշտը. եթէ գնաս ոչ, եասավուլը դամշով կը տանի։ Գնում ես, գնում ես իրա մրօվի սուղի աչքի առաջը։ Աղէն նստած ճռ—մռ, ճռ—մռ գրում ա. դողը ջանդ է ընկնում. մըտքումդ ասում ես՝ «աղա, ինձ թաղես. գլխիդ արևիդ մատաղ, հոգիս առ ու ինձ բաց թողի ետ գնամ շինը, խիզանս անտէր են»։ Վերջն ինչ ա դուրս գալիս դալամի ճռ—մռոցէն,—

շտրափ կամ զալա. դեռ ասում են, թէ զալամը Քեարամի թուրը չի»:

—Թանէս,—ասում է երիտասարդներից մինը,—մենք մեծաւորներ չենք. մենք գրում ենք, թէ բագը որչափ կեղտոտ է ու ինչքան կը նստի նրա մաքրելը: Եթէ գիւղացին աղբատ է, հասարակական հաշուով կը մաքրուի նրա բագը:

—Գիտեմ, գիտեմ. դուք միօվի մօտ չէք ուղարկում մեզ. ամա էլի զալամ ասած բանէն գիւղացի մարդը վախենում ա:

Երիտասարդները վերջացնում են իրանց գործը:

—Թանէս,—հարցնում է նրանցից մինը,—լինչու մարդ չի երեւում. ուր են տան տէրերը. մեզ հարկաւոր է նրանց տեսնել ու մի քանի կարեւոր խորհուրդներ տալ:

—Ո՞ւր են. տանը փակուել են,—պատասխանում է Թանէսը,—ահ ու երկիւղը չէնս էք գցել: Ձեզ տեսնողն աշխատում ա մի կերպ իր փասափուսէն քաշել. մինն ասում ա, թա դեղ են տալիս, միւսը՝ թէ շտրափ են առնում, մի ուրիշը՝ թէ ցան իրանց հետ ման են ածում: Աղջի,—յանկարծ բարձրաձէնում է Թանէսն ու ձեռքի ահագին մհակը իջեցնում խրճիթի դռան վրայ,—ինչ էք տուն մտել ու մեզ չենք ըռը-

խումը թողել. սամիտարնիք են եկել, դուրս եկէք:

Խրճիթի դուռը կամաց բացւում է: Չէմքի վրայ երեւում է երկշոտ գեղջկուհին: Երիտասարդները շրջապատում են նրան. հարցեր են տալիս, բացադրում են իրանց այցելութեան նպատակը, բայց նա լուռ ու ապշած նայում է իր չորս կողմը: Երիտասարդներից ոմանք մտնում են ներս խրճիթը զննելու համար: Ներսում երեխաները ճիչ են բարձրացնում: «Անան,—աղիողորմ ձայնով կանչում է նրանցից մինը,—մեծաւորները մեր տեղաշորը, դադաններն ու պուլիկներն ուզում են տանեն»: Գեղջկուհին շտապում է ներս. նրա յետեից մտնում են տուն միւսներն ու Թանէսը:

Երիտասարդները շարունակում են իրանց բացադրութիւնները. գեղջկուհին անբաւականութեան նշաններ է ցոյց տալիս, բոլորովին չը հասկանալով, թէ ինչ է կատարւում իր շուրջը:

—Աղջի,—դառնում է նրան Թանէսը,—սարսաղվել ես, ի՞նչ ա: Սրանք քո տեսած մեծաւորներէն չեն. սրանք սամիտարնիք են. սրանց եկած ճանպին պէտք ա մատաղ գնաս. եթէ սրանք չը լինէին, հիմա խուլ ցաւը չէնս ընկած կոտորում էր: Ճանապարհների վրայ

կրախտին ¹⁾ են սարքել, ազարօտ տեղերից թող չեն անում մարդ գայ չէնս, իրանք ազարից չեն վախենում, կեանք են մահու տալիս մեղ համար, բա դու դեռ ուզում ես սրանց քէֆին դիփչեի:

Անխօս գեղջկուհին ձեռքերի շարժումներով մի ինչ որ բան է ասում, որից ոչինչ չի հասկացւում:

— Զ՛ը, — դարձեալ խօսում է Թանէսը, — Սամիտարնի աղի ասածը չես հասկանում. աղէն ասում ա՛ ի՛նչ էք ուտում, ի՛նչ էք խմում, ջուրը սրտեղից էք բերում, գետից թէ աղբրից, գոմը, մարագը, հաւաքունն ու հորթատունը, բագն ու բասալաղը ²⁾ խի՛ թամուզ չէք պահում:

Գեղջկուհին կռանում է ու իր մօտ կանգնած փորրիկի ականջին մի ինչ որ բան է փռփսում. նա բառ առ բառ կրկնում է մօր խօսքերը:

— Մեր նանն ասում ա, դէ, ձեզ մատաղ, ի՛նչ պտենք ուտիլ, չոր ու ցամաք քեսսիք մարդիկ ենք. մի օր թան ա, մի օր լոբի, մի օր մածուն, մի օր շուշան. շատ ժամանակ էլ ցամաք հաց ա մի բուռը թթի կամ գիլասի:

¹⁾ Կարանտին: ²⁾ Հայաթը:

հետ: Էս տարի շատ փիս տարի ա. չոր հացով պիտի եօլա գնանք. եմիշը, ձմերուկը, սոխն ու կանաչին դաշտից բերելիս կրախտինումը բռնում են ու փչացնում, բերողից էլ չտրափ են առնում. էլ մենք ինչո՞վ կառավարվենք:

— Իսկ ջուրը:

— Զուրը բերում ենք մեր արխիցը. աղբիւրը հեռու ա: Մեր էշը երբ տանն ա լինում, էլի կէնդ-կէնդ նրանով ջուր ենք բերում, հիմա է՛ն այստեղ չի, արխիցն ենք բերում:

— Իսկ դռան աղբն ինչո՞ւ չէք մաքրում:

— Մեր նանն ասում ա, դէ, ձեզ մատաղ, հիմա մնց անենք, բաններս շատ ա, կըհաւաքենք, բագումը թուփ կանենք ու ոնց ամեն տարի արել ենք, այս տարի էլ, երբ ձիւնը կըգայ, մեր ապէրը պարապ կը մնայ ու աղբը իշովը կըկրի ու դէն կածի:

Երեւոյսարդներից մինն սկսում է բացատրել գեղջկուհուն նրանց վարած կենցաղավարութեան վնասակար կողմերը: Գեղջկուհին դարձեալ շուարուած նայում է: Թանէսը մէջ է մըտնում:

— Աղջի, սամիտարնին ասում ա, էս ազարի ժամանակը քօլի արջի պէս եօլա գնալը ձեռք չի տալ. թամուզ ապրեցէք, ձեր բողաղ-

ներին լաւ նայեցէք. խուլ ցաւը բոխի, շուշանի, մածնի ու մրգեղէնի մէջ սատանայի պէս կուշ եկած ուտողին է սպասում. հէնց որ կերաք, ձեզ էլ կուշ կածի: Միս կերէք, խորոված, բոգբաշ ու խաշու կերէք, չայ խմեցէք:

— 2այ:

— Հա՛, չայ. տեսել չես չայն ի՞նչ դատ ա:

— 2է:

— Բա մեծաւոր եկած ժամանակն իսկի ստարշինի դռնաւն անց չես կացել, տեսնաս՝ աղէն ինչ ա ուտում, ինչ ա խմում:

— 2է:

— Լաւ, թա տեսել չես, սամիտարնի աղէն քեզ չայ կրտայ, եփելու ու խմելու ձևը ցոյց կըտայ, Թանէսը դեռ չվերջացրած, գեղջկուհին, ձեռքերով մի յուսահատ շարժում գործելով, յետ է փախչում ու կրկին կռանում իր փոքրահասակ թարգմանի ականջին: Նա այնքան շփոթուած է, որ չի նկատում, թէ հակառակ ընդունուած սովորութեան, բարձրաձայն է խօսում օտար տղամարդկանց մօտ. «2է, պէտքը չի, — ասում է նա, — էդ չայը դեղ ա, որ լաւ բան լինի, դուք կըխմէք. պէտք չի, պէտք չի, գնացէք. թէ կըմեռնենք, թող Աստուծո՛ւ կամքը լինի. դուք ուզում էք, որ մեզ կոտորէք»:

Երիտասարդներն անզօր են նրան հակառակը համոզել. նա ոչինչ չի ուզում հասկանալ: Երեխաները ճիշ են բարձրացնում: Զունը դըրսում սկսում է ոռնալ: Երիտասարդներից մի քանիսն անբաւականութեամբ դուրս են գնում:

— Միայն դա չէ, գնանք, — ասում են նրանք, — դրա պէս հարիւրները կան, որոնց հետ մենք պէտք է գործ ունենանք, գուցէ մի այլ տեղ յաջողութիւն գտնենք, գնանք:

Թանէսը կրկին խօսում է:

— Ահր ասում են կնկայ խելքը օտի կըրնուում կըլինի, դա սուտ չի: Իզուր տեղը չեմ մեր կնկայ անջկակովթին դադանակով տալիս, երբ ասածս չի հասկանում. էն վախտը խելքը գլուխն ա հաւարում: Աղջի, — դառնում է նա գեղջկուհուն, — դու գիժ ես, ի՞նչ ես. սամիտարնին խի մօր ծիծ կտրող ա, որ քեզ դեղ տայ: 2այն ուզում չե՛ս, ուզում չե՛ս. չէ՛, դէ դուրս եկ, չներդ պահի:

Ո՛հ, ի՞նչ անեմ, — ասում է ինքն իրան Թանէսն ու ուղղում քայլերը գէպի դուրս, — խուլ ցաւ, էդ սրտեղ ես, եկ է՛. եկ ու կոտորի: Ես ձեզ մատաղ, սամիտարնիք, որ ինձ լըսէք, էլ խուլ ցաւի ըռելսը կրախտինաւ պահիլ չէք. թողէք մի գայ, բրդի, լափի, որ սըրանք գիտենան թէ եղը մածնիցն ա:

Թանէսը գուցէ գեռ շատ խօսար, եթէ
չները վրայ չհասնէին ու չընդհատէին նրա մե-
նախօսութիւնը:

Բ.

Հազիւ երիտասարդները հեռացան, հա-
զիւ շների հաջոցը կտրուեց, իսկոյն հարեան
տների դռները բացուեցան ու մի քանի կա-
նայք շրջապատեցին մեր ծանօթ գեղջիկուհուն.
նրանք յսկսեցին հետաքրքրութեամբ հարց ու
փորձ անել:

— Աղջի, սամիտարնիրը գնացին, բա չը
վախեցար, դեղ չտուին, ի՞նչ ասեցին:

— Գնացին, գնացին. ներանց գնալն ըլի,
գալը չլինի: Օր էս ետը ով ում անիծի, թող
ասի՝ քո տունը սամիտարնի մտնի:

— Ի՞նչ ա, աղջի, շտրափ առան:

— Շտրափը լաւ ա. ուր ա, եթէ շտրափ
առնէին ու կորչէին: Ինչ ունեմ տանս, լոխ
հարամեցին. պէտք ա գնամ տէրից օրհնած
ջուր բերեմ, հալալեմ. ամաններս մուրտառե-
ցին. մինչև իմ վրայ հասնելն ամեն բան ձեռ-
նահարեցին, ով է գիտում, գուցէ գեղեցին:

— Ո՞նց գեղեցին, ի՞նչը գեղեցին:

— Ինչը գեղեցին. շուշանը, պէրլին ¹⁾,
թանը, մածունը, պանրի մոթալը, էլ բան չը-
թողեցին. պէտք ա ցամաք կոտորուենր: Խուլ
ցաւը դրանցից լաւ ա:

— Բա, ցաւին մատաղ, նա որ կայ, Աս-
տուծու պատիժ ա, մինին կը տանի, միւսին
կը թողնի: Սամիտարնունց գլուխները հողեմ.
նրանք ամեն բան դեղում են, որ մենք կոտոր-
վենք: Տէր-Ստեփանը էն օրն Ամենափրկիչումը
պաշտում անելիս ասեց, որ ըտէնց հրաման
կայ. սայաղ ²⁾ կացէք:

— Դեռ քո բախտիցը Զաքար սամիտար-
նին նրանց հետ չի ըլել:

— Խի նա ի՞նչ անում:

— Ինչ անում: Մի սատանայի մաշին ձեռ-
քին բռնած, «բռ հա բռ, պժ հա պժ» անե-
լով, սրա-նրա վրայ դեղ ա չաղ տալիս:

— Էդ ո՞նց մաշին ա, աղջի:

— Ո՞նց պտի, բեզ ո՞նց ասեմ. հէնց ա
ղաւալ Աւագի գուռնէն ըլի, ամա նրա պէս
կկլում չի: Դեղիցն էլ շնահոտ ա գալիս: Տէրն
ասում ա, հէնց մենակ նրա հոտից մարդ կը-
մեռնի:

1) Բոխը: 2) Զգշը:

— Բա ուր ա կորել Զաքար սամիտարնին, ա նրա գլուխը հողեմ ես:

— Սե ատակը, ջհաննամը. ասում են կըրախտինումն ա, այնտեղ գնացող-եկողի վրայ դեղ ա շաղ տալի: Ասում են էգուց պիտի գայ շէնս:

— Ոչ գայ, փուշ գայ. հողեմ նորա խեռալ գլուխը, — ասում են զայրացած գեղջիկուհիներն ու այս-այն կողմ ցրում:

Գ.

Գիւղի հրապարակում ահագին աղմուկ է տիրում. գոռում են, բլաւում են, հայհոյանքներ մինը միւսից ընտիր առարկում են զանազան հասցէներով. ով ինչքան կոկորդում ոյժ ունի, գործ է դնում անխնայ: Աղմուկն ու իրարանցումը դնալով զօրեղանում է: Կողմնակի մարդ ոչինչ չի կարող հասկանալ, թէ բանն ինչումն է: Վերջապէս տանուտէր Յակոբին գգիր Թանէսի եռանդուն օգնութեամբ յաջողւում է մի քիչ աղմուկը մեղմացնել: Լսվում են մի քանի անգամ տանուտիրօջ հրամանները. «ադա, էդ հարամ զադին մի նի պրանի, ադա նրա կարկաժին մի ածոց արա. մի տուր է,

մի տուր է, մի տուր, բալքի սիրտս հովանայ»: Թանէսն աջ ու ձախ ճնի է պրանում զորս դու պատուիրեցեր» ու «ածոց անում»: — «Ո՛ւհ, Թանէս, ըշտա մի Ակնի ձորումը ճանկս կընկնես»: Լըսւում են այդպիսի բողոքներ ու սպառնալիքներ. ճնի պրանուողների» կողմից:

Թանէսը, իմանալով որ, վաղ ուշ տանուտէր Յակոբի այժմեան հզօր կառավարութեան անկումը նրան էլ իր հետ պիտի անդունդը տանի ու Ակնի ձորում սրա-նրա ճանկը գցի, որոնք «մինին երկու են նի պրանելու» նրան, մեղմացնում է իր հարուածներն ու քիչ-քիչ բոլորովին յետ քաշւում հրապարակի մի կողմը: Ճանուտէր Յակոբի սիրտը վերջապէս հովանում է, և նա սկսում է խօսել:

— Ա՛ խալիւր, ¹⁾ — ասում է նա, — էդ սամիտարնին իրանց գլխու չեն ման գալիս, նըրանց հրաման ա արել նաչալնիկը, նրան էլ հրաման ա արել գբրնատը, գբրնատին էլ սարգարը ²⁾, սարգարին էլ էմիստը ³⁾:

Վերջին խօսքը երբ լսում է, տիրում է մեռելային լուութիւն:

— Մենք էլ մեղանից ոչինչ չպիտի խնա-

¹⁾ Ժողովուրդ: ²⁾ Կառավարչապետը: ³⁾ Մի-նիստը:

յենք, — շարունակում է տանուտէրը, — պէտք ա
դեղ առնենք, տանք սամիտարնունցը, նրանց
ասածները պէտք ա լսենք. որտեղ կրախտին
ա հարկաւոր, պէտք ա կրախտին սարքենք,
կըպլավէրներ ¹⁾ տանք: Եկող-գնացող մարդ-
կանց պէտք ա կրախտինում երկու-երեք օր
պահենք. պէտք ա նրանց հաց տանք, ջուր
տանք. նրանք էլ մարդիկ են մեզ պէս, թող
չի պտենք անիլ, որ սոված մեռնեն: Սամի-
տարնունցն էլ հրաման ա արած, որ հիւանդ-
ներին պահպանեն. նրանց դեղ տան, նրանց
մօտիցը չհեռանան, մարմինը մրդեն, քացախ
քսեն, թող չանեն, որ առողջ մարդիկ հիւանդ-
ներին մօտկանան: Էն օրն էս իմ աչքով տե-
սայ, ինչպէս Մրտիրոս սամիտարնին կրախտի-
նում ջըմրթում էր քաղաքից եկած մի հիւան-
դի, իսկ մեր կըպլավէրները ահից խմել, հարբել
էին, կօպալները ցոյց էին տալիս սամիտար-
նուն, որ իրանց չմօտենայ: Սամիտարնիքն են,
որ կարողանում են նրանց հետ եօլա գնալ: Կը-
պլավէր Կեալին հարբած իմ մօտ բղաւում
էր, թէ՛ սամիտարնիքն ի՛նչացու են, որ կա-
րողանան խուլ ցաւի ըռելիս ետ տան: Անպի-

¹⁾ Կըպլավէր — պահպան կօպալով, դագա-
նակով զինուած, ПАЛОЧНИКЪ.

տանները սամիտարնիներին թաքուն գին արադ
են տանում իրանց հետ կրախտին. հէնց որ
հիւանդ են տեսնում, հարբում են, մեռածների
պէս ընկնում. նրանք հիւանդ պահող են: Մեծ
փուշը գլխամեռ Կեալին ա. նրան ասես՝ «ա
Կեալ, խմի ու սրա նրա կըպլավթակ տուր». ու-
րիշ բանի հետ նա գլուխ չունի: Սամիտարնիքը
մեծ օգուտ են տալիս մեզ. խի՞ ձեզ յայտնի
չի, թէ անցեալ կիրակի Գառչով գիւղում ով
թաղեց խուլ ցաւով մեռածներին. մեր սամի-
տարնիքը չի՛ն: Եղբայր, քոյր, ազգական, — լոխ
փախել էին ահից: Տէր-Մինասն էլ սուտ հի-
ւանդացել էր. որ չթաղի, կամ լաւ փող վեր-
ցնի թաղելուց առաջ, բայց մեր սամիտարնիքը
պինդը գցեցին ու տէրտէրին իրանց հետ տա-
րան: Տէրը տընրտընքալով գնաց. մինչև վերջն
իրան հիւանդ ցոյց տուեց: Տուն կրակ ընկածը
չուլչառը չուռ էր կալել, խաչն ու աւետարա-
նը ձեռքին բռնել ու մի իշի վրայ նստել. կէս
վերստ հեռու էր գնում դագաղներից: Ակամայ
մարդու ծիծաղ էր պրծնում, երբ տէրը իշին
համ «թոջէ» էր ասում, համ էլ բարձրաձայն
«տէր, ողորմեա» երգում:

Տանուտէր Յակոբի ճառի վերջաբանը փոքր
ինչ զուարճացրեց գիւղացիներին: Նրանք իս-
կոյն մոռացան իրանց կառավարչի ու նրա զը-

զիր Թանէսի ներկայութիւնը ու կրկին սկսեցին իրար մէջ զանգատուել սամիտարնիներից։

—Ա, ձեզ մատաղ,—ասում է աղսաղկալ Ծատուրը,—էսհէնց բան մի էր տեսած. էլ ոչ տուն են թողնում, ոչ պուճախ, ամեն բան պառոււմ են։ Մ'ենկ տեսար կաղէթը ձեռքին բռնած սամիտարնին եկաւ, մօտդ կանգնեց, գրաբառ-գրաբառ կարդաց, թա՛ էս կերէք, էն խմեցէք, էսհէնց նստեցէք, էսհէնց վեր-կացէք, գինի արաղ քիչ խմեցէք, քէֆ չանէք, տները, կալը, դոմ'ն ու մարագը թամուղ պահեցէք, եփած ջուր խմեցէք. հ'ը, աւելացնում ա, որտեղ աղբը տեսայ, պրիտակօլ ¹⁾ կըշինեմ, շտրափ կառնեմ։ Մինն ասի՝ սամիտարնի պարուն, էդ մը բամբին քեզ դէսը բերաւ. մինչև հիմա, որ դու ըլել չես, խուլ ցաւից մենք կոտորուել ե՞նք։ Ատա՛, իսկի ցաւն ինչն ա՛. ցաւ չի կայ, լոխ սուտ ա. որտեղ սամիտարնի կայ, ցաւն այն տեղ ա։ Չեմ յիշանում, որ սե առակից էդ թալակից փախած պարունները եկան չէնս. բաբաթ ալանջնիս գինջ ապրում էինք։

—Դրուստ ես ասում, Ծատուր, դրուստ, —մէջ է մտնում Չոռունց Մարութը,—ցաւն ինքը սամիտարնին ա։ Ամաքը մի սիպտակ չը-

¹⁾ Արձանագրութիւն, протоколъ.

լապկա են պլխներին դրել, պնացել Ռուսէթա ղովին մի ային օյին այլը-բէն սովորել ու եկել էստեղ մեզ բան սովորեցնում. ասում են, թա զակօնը ըսհէնց ա՛, ինչ որ մենք հրաման ենք անում, պէտք ա կատարէք, կասես թա աշխարհիս զակօններն իրանց շըլապկաների մէջին լինեն դրած. կասես մեզ պէս փափախաւորն իսկի զակօն չի գիտում։ Չէ, աղնիւ պարուններ, սխալում էք, փառք Աստուծու, մենք էլ ենք զակօնի հոտն առել. մեզ էլ էն վաղի իշերը միք կարծիլ, որ մեր կապն առնէք ու դորն ուզէք, դէնը քաշէք. հենց արէք, որ մենք ձեր ոտները թալաք չի գցենք։ Զահլա տարան դրանք իրանց խեռալ-մեռալ քարոզներով. մինը գալիս ա՛ թա գետումը լողանալ միք, մինը՝ թա թուլթը, գիլաս, տանձ ու խնձոր միք ուտիլ. մինը՝ թա երբ բաղը ջրում էք, ձեռներնիդ աղբրի ջրով լուացէք, մի ուրիշն էլ՝ թա կէնդ կէնդ ման եկէք, էստեղ էնտեղ կուտա. կուլի միք. քիչ ա մ'նում, թէ ասեն՝ գիշերները մենակ քնեցէք։

—Հա, հա, հա, հա,—բարձրաձայն ծիծաղում են գիւղացիները,—սամիտարնիք, ձեր տները բանդուլի, բա էն ժամանակ դուք մեր կնանուկնց ձեռքերից մնց կըլլածէք։

—Ատա՛, դրանք Աստուած չունեն, Աս-

տուած,—մէջ է մտնում դարբին Ղազարը,—
անցեալ կիրակի, Վարդավառ օրը, մի քանի
երեսէք Քիբունց բաղջում խաղ էին անում.
ես էլ նստած մի ծառի տակի տրեխ էի կար-
կատում: Մնել տեսայ փուշի գլխով մի սամի-
տարնի բաղջէն մտաւ, մօտեցաւ թիւթն ծառին,
մի ճիւղը ցած բաշեց ու սկսեց թուլթն ուտել.
նայեց չորս կողմը, դարձաւ երեսանցը, թէ՛
«ա, խիզան, ինչո՞ւ չէք թուլթն ուտում», երե-
խէրը պատասխանեցին. «դադադա¹⁾ ա»: — «Ու
ա դադադա արե՛ր», — հարցրեց նա: — «Սամի-
տարնիքը»: «Է՛, կերէք, խիզան, սամիտար-
նունցը մարդ կըլսի», — պատասխանեց նա: Ես
խսկոյն գլխի ընկայ, թէ բանն ինչումն ա ու
հարա տուի. «հայ, խիզան, ձեզ մատաղ, դա
ինքը սամիտարնի ա, փախէք հա փախէք. դա
եկել է, որ էստեղ թուլթը, մըգեղէն ուտող
բռնի ու պրիտակօլ չինի»:

— Ղազար, — կտրում է նրա խօսքը ծա-
տուրը, — էն դու ի՞ր Վարդավառ օրը հարայ
տալով Դիմաց տեղով վազում, թա՛ «հայ, ձեք
տները բանդուի, բաղջաներում սամիտարնիք
են երեացել, փախէք, փախէք, որ սամիտար-
նիքը եկան, փախէք»:

¹⁾ Արգելուած ա:

— Բա՛ ինչ ա, ես էի. որ հրետին հարա
չտայի, էլ չինումս մէր-մանուկ չէր մնալ, լոխն
էլ պրիտակօլ կընկնէին. դէ էն ժամանակ ըշ-
տրաւներ ա, որ կըսուէին սրանից-նրանից:

— Էդ ո՞ր սամիտարնին էր:

— Զաքար սամիտարնին:

— Էն զահրիմար զուռնէն ձեռին էր:

— Որ զուռնէն:

— Ատա՛, էն ստնի մաշինն էլի:

— Բա՛ ինչ էր. ծառերի վրայ նրանով դեղ
էր չաղ տալիս:

— Այ անտէր ըլի նրա մաշինը իրա գըլ-
խին. խուլ ցաւն էն ա հրէ նրա միջին. իմ
թշնամին նրա դուռոցը լսի ոչ:

Ծատուր քեօխով, — խօսում է ձկնորս Պո-
ղոսը, — բա ասիլ չես, սամիտարնիքն իմ տունը
բանդեցին, բարուրանդ արին: Զինի պաշօտ-
նիկ ես, վանդատ եմ անում քեզ, էլ էդ պըշօտ-
նիկուլթինը ո՞ր օրուայ համար ես պահում, որ
նրանց գլխին մի շան օյին չես գնում:

— Ադա՛, ո՞նց քանդեցին:

— Ո՞նց պտի: Ուրբաթ օրը մի քանի ընկեր-
ներով Քռի դրաղից ջորիները ձուկը բեռ-
նած գալիս էինք չէնս. եկանք ու Մըկեց աղ-
բումը կրախտինի ըռեխ ընկանք: Բեռներն
խսկոյն ցրիւ տուան. ոչ բարով սամիտարնի-

բը, մի-մի շուշա աշրրներին դրած, դէս պարանցին ձուկը, դէն պարանցին, ոռսիվէր մի քանի խօսք փսփսացին իրար ախանջի ու յետոյ յայտնեցին, թէ ձուկդ հոտած է, հորթնած է, պիտի փչացնենք: Աղաչեցի, պաղատեցի, դատ չի դառաւ. ձեռաց պրիտակօլ շինեցին, թափեցին ձուկը ջուաներից, մեզանից առաջ մի քանի բեռը եմիշ-ձմերուկ էին բռնել, այն էլ հետը խառնեցին, նոթածեցին վրան ու կրակ տուին: Ի՞նչ կարող էինք անել. կըպլալէրներն ամառը մի դադանակ ձեռներին բռնած մեզ չըջապատել էին. եթէ նրանք չլինէին, մենք սամիտարնունց շլապկաները կտորկտոր կը պատռոտէինք: Էդ նեղ սհաթին տուն քանդուած Զաքար սամիտարնին ստնի մաշինը ձեռքին բռնած մեզ վրայ դեղ էր շող տալիս: Այրի կըսլլալէր Կեալին, չիտակ մասխարա գցեց նրան. թէն սրտերնիս նեղ էր, ամա էլ բաւականին ծիծաղեցինք սամիտարնիի վրայ:

— Ի՞նչ ասեց Կեալին:

— Փուշը, հէնց եմ գիտում լաւ խմած էր, մօտ վազեց Զաքարին, ասելով. «սամիտարնի ջան, էդ անտէր զուռնէդ մի պատառ էլ ինձ վրայ դռուցրու»: Սամիտարնին դռուցն սկսեց Կեալին. «սամիտարնի ջան, խուլ ցաւը զուռնիդ չդռուցէն ա վախճում, թէ դեղի չնա-

հոտէն»: Սամիտարնին մնաց կմկմացնելիս: Կեալին. «է, քեզ մատաղ, էդ զուռնաւը դու ցաւի ըռելը ետ չես տալ. լաւն էն ա դաւալութինը զնես, զուռնիդ կլկլալի փչես ու ինձ ըստեղ պարածես»: Մենք մի լաւ ծիծաղեցինք. սամիտարնին բարկացաւ Կեալիի վրայ, ամա նա խսկի այնուժը չգցեց, թէ սամիտարնին ինչ ասեց:

— Պօղոս, — խօսում է Ծատուր աղսախկալը. — գանգատդ ես տեղաց կանեմ, ամա դու էլ սուս-փուս տեղդ չնստես, սամիտարնունցը բաց չի թողնես:

— Ո՞նց բաց կըթողնեմ. րսան փութ: ձուկն են կրակ տուել, իմ վնասն ուղիւ պտեմ:

— Ո՞նց պտես ուղիւ, — հարցնում է դարբին Ղազարը:

— Ո՞նց. Մակիշ գալլաքն ¹⁾ ապրած կեսայ. վնասիս շափ էլ փող պարտք կանեմ, կուտացնեմ նրան, միայն թէ սամիտարնունց հոգին հանի, մրօվի սուգի կուշտը բաշ տայ նրանց:

— Բն, դրանց պէտք ա Մակիշի դալամի ըռելը տալ:

¹⁾ Դալլաք, գլուխ ածելով, անուսով Ժողովրդի մէջ յայտնի են տիրահոջակ ցեց փաստաբանները, «աբլակատները»:

—Ահա,—խօսում է գիւղացիներէից մինքն,—Մակիչը զատ չի շինիլ. գըբընատուրը նրան քաղաքից վաճառել ա, ախոս՞նի սուգի մեծ երանալն էլ բոլոր գիւանատներէից ա գուրս արել, մրօվին էլ, որ հոգին ձեռքին ըլի, բաց կըթողնի Մակիչից պըծնելու համար. աղէն նրա երեսին իսկի չի ուզում եաշել, նրա ձեռքով դրած խնդիրքն էլ չի ընդունում:

—Է՛, սարսաղ,—խօսում է Ծատուրը,—Մակիչը մնաց չի գատ շինիլ. իր կեանքում նա հազար թալակից պանիր է կերել, ջրաղացի գլխովն որ գցես մէջը, տակովը ցամաք գուրս կըգայ: Մեր մրօվին լաւ մարդ ա, շատ ա իմաստուն, քերականութիւն շատ ա կարդացել, ամա զակօնում Մակիչը նրան զօռ կանի: Մակիչ գալլաքը որ կայ, թամամ զակօնի մարդ ա. զակօնաւ նա մօր ծիծ կըկտրի. վկայ կըգտնի, սուտ երդումով ու սարքովի թղթերով բան գլուխ կըբերի: Նա արդէն պառաւ մարդ ա, ամա սուգումը, իրա մրօվի առաջին, Քեարամից իղիթ ա երեւում: Դուք նրան մնաց էք ճանաչում:

—Հա, հա,—լսում են ձայներ այս ու այն կողմից,—Ծատուրը դրուստ ա ասում. Պօղոս, գործդ Մակիչին տուր. նա սամիտարնունց աչքը կըհանի:

—Ա՛ խալխը,—խօսում է կրկին Ծատուրը,—եկէք էգուց մի քանի մարդիկ հաւարուենք, գնանք Մակիչի մօտ Պօղոսի գործում վկայ գրուենք. մեր ջիբիցն էլ մի զատ տանք նրան, միայն թա նա մեր չէնը էդ շըլապկաւորներից ազատի:

—Չատ լաւ, շատ լաւ,—լսում է չորս կողմից,—Մակիչն ապրած կենայ,—շարունակում է գիւղացիներից մինքն,—մինչև մեր գընալը նա արդէն սամիտարնունց մինի ճտումը թոկ է դրել:

—Ո՞ւմ ճտում:

—Գրիգոր սամիտարնի:

—Ի՞նչ պատճառով:

—Անցեալ երկուշաբթի օրը սամիտարնին նրա դռան աղբի մասին պրիտակօլ ա շինել. Մակիչն էլ առանց երկար ու բարակ դէս ու դէն անելու վեր ա կացել ու չկօլի մեծ երաւլին դանօս գրել նրա վրայ: Դէ հիմա, Գրիգոր սամիտարնի, գնա ու կարդա. էլ քո առաջին չկօլի դռներ չեն բացուիլ Մակիչի դանօսից յետոյ:

—Էդ լաւ բան ա, լաւ բան ա,—դէ, Պօղոս, գնա Մակիչին ասա, որ զալամը սրի, մենք էլ քո ետեից գալիս ենք,—ասում է Ծա-

տուր աղսախկալը ձկնորս Պօղոսին, որն ըշտապում է դալլարի մօտ:

— Օրհնեա, տէր, օրհնեա տէր, — լսում են ձայներ, ու գիւղացիներն այս ու այն կողմն են մղւում, առաջ թողնելով տէր-Մեսրօբին: Ծառուրն ու մի քանի ուրիշ աղսախկալներ աջն առնում են:

— Ա՛ տէր, դառնում է նրան Ծառուրը, — քո աղօթքները մեզ դեերից, սատանաներից, չար փորձանքներից ու պատուհասներից միշտ ազատում են, բա սամիտարնիներից ազատիլ չի պտեն:

— Ա՛ ձեզ մատաղ, տէրը գլուխն օր քարովը տայ. նա իսկի ինքը չի կարողանում նրանցից ազատուել, ձեզ ո՞նց ազատի:

— Քեզ էլ են նեղացնում, ա՛ տէր:

— Բան ինչ են անում. գալիս են մօտս, թէ՛ «տէր հայր, էջմիածնից ու էմիստրից թունդ հրաման կայ, որ խուլ ցաւով մեռնողներին անպատճառ եկեղեցական կարգով թաղես, ամա ցաւոտ տներում ժամահաց ուտիլը բոլորովին արգելւում ա. ոչ ինքդ պիտի գնաս հոգեհացի, ոչ ուրիշների թողնես»: Բա ձեզ եմ հարցնում, դա տեսնուած բան ա՛, ա՛ խալիւր. մեր սուրբ օրէնքը ոտի տակ են տալիս, էլ ի՞նչ ասեմ ես, ում զանգատուեմ. լաւ, որ մե-

ռելատանը մարդ չի նստի, բաժակ չի դարտակի, չ'ասի՝ «Աստուած ողորմի անցաւորանց», էս տան հին ու նոր ննջեցեալանց», էն տան մեռնողի հոգին էլ արքայութիւն կըդնայ: Եկե՛ են ասում. «Տէր-հայր, եկեղեցում պէտք ա բարոգես, որ ժողովուրդն այս ցաւի ժամանակ պաս չի պահի ու աշխատի լաւ կերակրուել»: Լաւ լսեցէ՛ր. պաս չի պահի: Սա լսուած բան ա, ա՛ տէրը նրանց թաղի. բա Աստուած էս կրակն ինչո՞ւ համար ա թափում, իր ստեղծածներին ինչո՞ւ ա կոտորում: Նրա պատուէրները մենք մոռացել ենք. աշխարհս Սողոմ-գոմոր ա դառել, և նա կրակ ա թափում մեզ վրայ, որ այրուենք ու ոչնչանանք:

Տէր-Մեսրօբը շարունակում է խօսել. ժողովուրդը սարսափած լսում է իր հովուին, որը դժոխքի ահաւելի պատկերն է նկարագրում արդէն:

Նրանցից քիչ հեռու, մի անկիւնում, դարբին Ղազարը, շրջապատուած մի խումբ գիւղացիներով, մի ինչ որ բան է պատմում նրանց:

— Տէրը, — ասում է նա, — ամենից շատ ա բարկացած սամիտարնիների վրայ: Անցեալ հինգշաբթի օրը մեր տանը կնու՛նք կար. բաւականին մարդ էինք կանչել: Երբ տէրն եկաւ, հացն օրհնեց, նստելիս ինձ կանչեց ու ասաց՝

«Ղազար, որդիս, օրհնուես դու, լաւ պատրաստութիւն ես տեսել, ամա հէնց արա՛, որ հացը գլխներին հարամ չլինի. դնա՛, դռնից լաւ նաշիր, տես՝ հօ սամիտարնիր չեն երևում. անիրաւները կրկարծեն, թա խուլ ցաւօտ մեռել ենք թաղել ու եկել ենք այստեղ հողեհաց ուտելու»: Գնացի դուրս, դէս նայեցի, դէն նայեցի, եկայ ներս, թէ՛ «ա՛ տէր, միամիտ կացէ՛ր, կերէ՛ր, խմեցէ՛ր, տունը ձեզ փէշքէշ, լաւ քէֆ արէ՛ք. սամիտարնիրը կրախտինումն են, ոչ գան, փուշ գան, դուք արխային խմեցէ՛ք»: Տէրն ու աղսախկալները միամտացան. ուտել-խմելուն էլ վերջ չկար. վեր կենալու մասին էլ չէին մտածում: Վերջապէս գինի-արաղը հատաւ. էս ո՛նց անեմ, էս ի՛նչ անեմ. մնացել էի միտք անելիս. ապրեն սամիտարնիրը, նրանք ինձ թափեցին:

—Աղա՛, ո՛նց:

—Ինչպէս թա ո՛նց. դուրս գնացի տնից, նայեմ, տեսնեմ գիւղի գիմացը երկու սամիտարնի ձիաների վրայ նստած, բշած գալիս են. տուն վազեցի, հարա տալով՝ «ա՛ տէր, բա հրէ սամիտարնիր են գալիս. էս ո՛նց անենք»: Տէրն խօկոյն տեղից վեր կացաւ, հացն օրհնեց, դո՛նադներս ցրուեցին, այս ու այն կողմն օրօր-ւելով ու սամիտարնուեց եկած ճամբէն անիծե-

լով: Ամենից շատ գրգռուած էր Մուսունց մահոտօի Մնացական ապէրը: «Սա ի՛նչ բան ա, —ասում էր նա, — օրը հարիւր մեծաւոր ա գալիս չէնս. մինը գալիս ա՛, սա էս ո՛վ ա, — նաչալնիկ ա՛, բա սա՛ —սա էլ պրիստաւ ա՛, բա սա՛ —սա էլ ալոօժնի ա՛, բա սա ի՛նչ ա — սա էլ մրօվի սուգ ա. բա էս մի՛նը — սա էլ զեմ-լամէր ա՛, բա սա էս ո՛վ ա —սա էլ մժօվի ա, բա էս մի՛նը, էս շուշի կտորտանքն աչքերին դրածը —սա էլ դօխտուր ա, բա սրանք էս ո՛վ-րեր են, էս որ կազէթները ձեռներին բռնած չէնս ընկած ման են գալիս —սրանք էլ սամիտարնիր են, հիկել են մեզ մահից փրկեն, այ դրանց մահից փրկած մարդի աչքը դուրս գայ: Ատա տնաշինի տղէք, —աւելացրեց Մնացական ապէրը, —բա էս խալիսը խեղճ չի, հէնց ինչ որ աշխատի, միայն ձեր ըռեխը կըզցի, ձեզ կուտացնի, բա ի՛նչըր, ինքը խոտ արածի՛»:

—Անիծուես սամիտարնիրը, անիծուես, —ասում էր ինքն իրան տէրը, —հացը գլխեցիս հարամ արին, հիմա էլ գնան ոչ էջմիածին խաբար գրեն: Փրկեա մեզ, Տէր, յամենայն չարէ, —ասաց, տէրը ու մինչև տուն մին փախաւ:



62

0014164

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014164

